Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
հուլիսի 7-ի N 702 - Ն որոշման

_____
(ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն)

_____ _____20 թ.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԿԱՅԱԿԱՆ N-----

_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____
(հանրային ծառայությունների համարանիշը)

Տրվել է փախստականի նույնականացման քարտի փոխանակման (կորստի, վավերականության ժամկետը լրանալու) կապակցությամբ (ընդգծել)՝

_____
_____20 թվականին:

(լուսանկար)

Վկայականն ուժի մեջ է մինչև ____ _____20 թ.

Անձնագրային ծառայության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
հուլիսի 7-ի N 702 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են նույնականացման քարտի կորստյան դեպքում, ինչպես նաև վավերականության ժամկետը լրացած՝ փախստականի նույնականացման քարտը փոխանակման ներկայացնելիս, փախստականի ցանկությամբ, դիմումի հիման վրա ժամանակավոր վկայականի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Փախստականի նույնականացման քարտի կորստյան, ինչպես նաև վավերականության ժամկետը լրացած նույնականացման քարտը փոխանակման ներկայացնելու դեպքերում, մինչև նոր նույնականացման քարտի տրամադրումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող փախստականին իր ցանկությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ հաշվառման վայրի տարածքային անձնագրային ծառայությունների (այսուհետ՝ անձնագրային ծառայություն) կողմից տրվում է ժամանակավոր վկայական:

3. Նույնականացման քարտի կորստյան, ինչպես նաև վավերականության ժամկետը լրացած նույնականացման քարտը փոխանակման ներկայացնելու դեպքերում ժամանակավոր վկայական ստանալու համար փախստականն անձամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ խնամակալի կամ ներկայացուցչի միջոցով, անձնագրային ծառայություն է ներկայացնում դիմում և 35 x 45 մմ չափսի երկու գունավոր լուսանկար: Խնամակալի կամ ներկայացուցչի միջոցով ժամանակավոր վկայական ստանալու համար դիմումին կցվում են խնամակալի կամ ներկայացուցչի անձնագրի և խնամակալի կամ ներկայացուցչի՝

խնամակալ հանդիսանալու հանգամանքը հիմնավորող փաստաթղթի պատճենը կամ լիազորագիրը: Դիմումն ընդունող անձնագրային ծառայության աշխատողը դիմումի դարձերեսին ստորագրում է և նշում իր պաշտոնը, անունը և ազգանունը, ինչպես նաև դիմումի ընդունման ամսաթիվը:

4. Ժամանակավոր վկայականը փախստականին տրամադրվում է սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ անմիջապես:

5. Ժամանակավոր վկայականը տրամադրվում է 15 աշխատանքային օր վավերակա-նության ժամկետով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փախստականն օրենքով սահմանված կարգով կնքել է սեղմ ժամկետում նույնականացման քարտ տրամադրելու կամ փոխանակելու վճարովի ծառայությունների մատուցման մասին պայմանագիր:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված պայմանագիրը կնքելու դեպքում ժամանակավոր վկայականի վավերականության ժամկետը սահմանվում է մինչև պայմանագրով նախատես-ված ժամկետի ավարտը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ